ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ԱՐԱԲԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

9(47+925)
Հ-85

ՆԻԿՈԼԱՅ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

Պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հայաստանի Հանրապետության
Գիտությունների Ազգային Ակադեմիայի
Արևելագիտության ինստիտուտի տնօրեն

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ՝ ԱՐԱԲԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

2361

ԵՐԵՎԱՆ 1996

Ավելի քան 80 տարի է մեզ բաժանում այն ողբերգական ժամանակից, որը հայտնի է «Հայոց ցեղասպանություն» ընդհանուր անվանք, որի սկիզբը դրեց Օսմանյան կայսրության երիտթուրքական ղեկավարությունը՝ 1915 թվականից չեռնամուխ լինելով «Հայկական հարցը հայերին ֆիզիկապես ոչնչացնելու միջոցով լուծելու» ծրագրի իրականացմանը: Այդ ծրագիրը առաջին անգամ բանաձևել էր Օսմանյան կայսրության ներքին գործերի նախարար /պրեմիեր մինիստր/ Սաիդ Քյուչուկ փաշան դեռևս 1884 թ., որը այնուհետև հայերի նկատմամբ իր քաղաքականության հիմքում դրեց սուլթան Աբդուլ Համիդ Երկրորդը: Սուլթանին փոխարինելու եկած Իթթիհադ վե Թերաքքի կուսակցությունը, որը պատմության մեջ ավելի հայտնի է երիտթուրքեր հորջորջմամբ, նրանցից ժառանգեցին նաև հայկական հարցի լուծման վերոհիշյալ լուծման մեթոդը, որը որպես կարևորագույն սկզբունք դրվեց նրանց պետական քաղաքականության հիմքում: Մասնագետ պատմաբանները, իրավագետները, հոգեբանները և այլն, նշանակալի աշխատանք են կատարել հայոց ցեղասպանությանը վերաբերվող անգլիական,ամերիկյան, գերմանական, ռուսական և ֆրանսիական աղբյուրների ուսումնասիրության և հրատարակության ուղղությամբ: Շնորհիվ այդ աշխատանքների, որը արժանի է բարձր գնահատականի, լուսաբանվել են հայոց ցեղասպանությանն առչվող բազմաթիվ կնճռոտ հարցեր:

Սակայն միամտություն կլինի ենթադրել, թե այս բնագավառում արդեն ամեն ինչ արված է և ժամանակն է հանգստանալու: Դեռևս կան բազմաթիվ փարաբնույթ աղբյուրներ, որոնք դուրս են մնացել հետազոտողների տեսադաշտից և սպասում են իրենց ուսումնասիրողներին: Նրանց գիտական շրջանառության մեջ դնելը կնպաստի Օսմանյան կառավարողների ներքին, հատկապես ազգային քաղաքականության ավելի խորը և բազմակողմանի հետազոտությանը և նոր լույս կսփռի բազմաթիվ հարցերի, այդ թվում նաև Օսմանյան կայսրությունում 1915 թ. իրագործված հայոց ցեղասպանության այլևայլ կողմերի վրա:

Հետազոտողների տեսադաշտից դուրս մնացած աղբյուրների թվին են պատկանում արաբական հեղինակների ուսումնասիրությունները: Վերջին 25-30 տարիների ընթացքում արաբ հետազոտողները արտակարգ հետաքրքրություն են ցուցաբերում հայ ժողովրդի բազմադարյան պատմության նկատմամբ: Նրանց աշխատություններում բացառիկ տեղ են գրավում հայոց ցեղասպանության, դրա պատճառների, ներքին շարժառիթների, բնույթի և հետևանքների պարզաբանումը: Կահիրեում, Դամասկոսում,

Հալեպում, Բեյրութում, Բաղդադում և այլ վայրերում արդեն լույս են տեսել այդ հարցերին նվիրված բազմաթիվ մենագրական ուսումնասիրություններ, ժողովածուներ և հոդվածներ:

Արաբ հեղինակների աշխատությունները կարելի է բաժանել երեք խմբի:

Առաջին խմբի մեջ մտնում են այն ուսումնասիրությունները, որոնք անմիջապես նվիրված են 1915 թ. հայոց ցեղասպանության հարցերին: Դրանց թվին են պատկանում Ֆայեզ ալ- Ղոսեյնի «Ջարդերը Հայաստանի մեջ»[1], Մուսա Պրենսի «Արմենոցիդ»[2], Իլյաս Զանանիրիի «Ժողովրդի ողբերգությունը»[3], Նաիմ ալ-Յաֆիի «Հայերի կոտորածները և արաբական հասարակական կարծիքի դիրքորոշումը: Ապրիլ 24»[4], Սալեհ Զահր ադ-Դինի «Օսմանյան կառավարության քաղաքականությունը Արևմտյան Հայաստանում և մեծ տերությունների դիրքորոշումը հայկական հարցում /19-րդ դ. վերջին քառորդ - 20 դ. առաջին քառորդ/»[5] և այլն: Այդ աշխատություններից կցանկանայինք առանձնացնել Ֆայեզ ալ-Ղոսեյնի գիրքը, որը լույս է տեսել 1916 թ. և անմիջապես թարգմանվել ֆրանսերեն և եվրոպական այլ լեզուներով: Դա ականատեսի վկայություններ են և ըստ էության առաջին հրատարակված գրքերից է, որը համաշխարհային հասարակությանը տեղյակ պահեց դարիս մեծագույն ոճրագործության մասին:

Երկրորդ խումբը կազմում են արաբ հեղինակների այն աշխատությունները, որոնք նվիրված են Հայաստանի և հայ ժողովրդի ամբողջական պատմությանը,շատ հաճախ ընդգրկելով հայ ժողովրդի բազմադարյան պատմությունը հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը: Նրանք պարունակում են առանձին գլուխներ, բաժիններ կամ հատվածներ, որտեղ քննարկվում են հայոց ցեղասպանության հարցերը:

Նման բնույթի աշխատություններից կցանկանայինք նշել եգիպտացի իրավաբան Ֆուադ Հասան Հաֆիզի «Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը»[6], սիրիացի պատմաբաններ Մրվան ալ-Մուդավարի «Հայերը պատմության ընթացքում»[7], Օսման աթ-Թուրքի «Էջեր հայոց ազգի պատմությունից»[8], Սամիր Արբաշի «Հայաստան. Երկիր և ժողովուրդ»[9], լիբանանցի պատմաբան և քաղաքագետ Սալեհ Զահր ադ-Դինի «Հայեր. Ժողովուրդ և պրոբլեմ»[10] և այլ ուսումնասիրություններ:

Երրորդ խմբի մեջ մտնում են արաբ հեղինակների այն աշխատությունները, որոնք նվիրված են արաբական տարբեր երկրների՝ Լիբանանի, Սիրիայի, Եգիպտոսի, Իրաքի պատմությանը, մերձավորարևելյան տարածաշրջանի ընդհանուր պրոբլեմներին, այդ թվում նաև միջազգային հարաբերություններին և այլն: Նրանցում արծարծվում են նաև հայոց ցեղասպանության հարցերը և շատ հաճախ դրան նվիրված են առանձին ենթաբաժիններ: Այդ աշխատությունները ուշագրավ են այն առումով, որ նրանցում հայկական հարցը և հայոց ցեղասպանությունը քննարկվում են օսմանյան կառավարողների ներքին քաղաքականության և գաղափարախոսական տեսաղրույթների համատեքստում: Այդպիսի դիրքերից են լուսաբանվում հայոց ցեղասպանության հիմնահարցերը Ամին Սահիդի «Արաբների ապստամբությունները 20-րդ դ.»[11], Էմիլ Թումայի «Ազգային - ազատագրական շարժումը և արաբական միասնության պրոբլեմը»[12], Զեյն Զեյնի «Արաբական ազգայնականության ծագումը»[13], Ջիհադ Սալեհի «Թուրքական թուրանիզմը ֆունդամենտալիզմի և ֆաշիզմի միջև»[14], Ասադ Դաղիրի «Արաբների ապստամբությունը»[15], Մասուդ Զահիրի «Լիբանանի սոցիալական պատմությունը»[16] և այլ աշխատություններում:

Արաբ հեղինակներն իրենց ուսումնասիրություններում մեծ տեղ են հատկացնում հայոց ցեղասպանության պատճառների բացահայտմանը:

Նրանք առանձնացնում են չորս պատճառ:

Առաջին պատճառը ընդհանուր բնույթի է և վերաբերում է համայն Օսմանյան կայսրությանը և նրանում բնակվող ոչ միայն հայերին, այլև բոլոր ոչ թուրք ժողովուրդներին: Այդ պատճառը լավագույնս չկակերպել է եգիպտացի փիլիսոփա և պատմաբան Մուհամմադ Շակիկ Ղարբալը: Նա նշում է, որ Օսմանյան կայսրության լճացման, նեխման և ի վերջո կործանման պատճառն այն էր, որ նա «չէր հիմնված կրոնական, քաղաքական կամ սոցիալական նոր գաղափարների վրա, այլ հիմնվում էր պատերազմների և էքսպանսիայի վրա, և դուռ չէր բացում տարբեր ազգությունների և կրոնների պատկանող իր հպատակների առջև՝ կազմակերպելու իրենց տարատեսակ հարաբերությունները ուրիշ հայտնի գաղափարների և սկզբունքների վրա...Օսմանցիները վերցնող ազգ էին և ոչ թե տվող, ինչի մասին են վկայում նրանց գիծը և ծրագրերը»[17]: Ղարբալի այս տեսակետը, որը կիսում է նաև Ֆուադ Հասան Հաֆիզը, յուրատեսակ բանալի է հանդիսանում հասկանալու օսմանյան կայսրությունում իրագործված հայոց ցեղասպանության դրդապատճառները: Ըստ եգիպտացի հեղինակի, դա անխուսափելի էր, քանի որ Օսմանյան կայսրության ներքին և արտաքին քաղաքականությունը հիմնված էր բռնության և հալածանքների վրա, չէր ճանաչում ռայաների իրավունքները նոր, այն է՝ արդարության և հավասարության սկզ-

բունքների վրա կառուցելու հարաբերությունները երկրի ներսում թուրք և ոչ թուրք ժողովրդների միջև: Եւ ինչպես դիպուկ կերպով նշում է նա, օսմանյան կառավարողները ոչինչ չէին ուզում զիջել ոչ թուրք ժողովուրդներին, սակայն պատրաստ էին նրանցից վերցնել ամեն ինչ՝ ունեցվածքը, պատիվը և, ի վերջո, կյանքը:

Հայոց ցեղասպանության երկրորդ պատճառը ըստ արաբ հեղինակների այն նոր քաղաքական իրավիճակն էր, որ ստեղծվել էր Օսմանյան կայսրությունում 19-րդ դարում և 20-րդ դ. սկզբներին Բալկաններում և արաբական աշխարհում ունեցած տերիտորիալ կորուստներից հետո: Օսմանյան կառավարողները մտավախ էին, որ Հունաստանի, Բուլղարիայի, Սերբիայի, Ռումինիայի, Եգիպտոսի և Թունիսի անջատվելուց հետո, հերթը հայերինն է: Սակայն արաբ հեղինակները այստեղ նկատում են մի նրբություն. վերը թվարկած երկրները կայսրության ծայրամասերն էին և նրանց անջատվելը դեռևս հարցականի տակ չեր դնում կայսրության բուն գոյությունը: Այլ բան էր Արևմտյան Հայաստանը, որ արաբ հեղինակները՝ Սամի Արբաշը, Ֆուադ Հաֆիզը և այլն, համարում են Թուրքիայի սիրտը՝ կալը: Նրանց կարծիքով այդ սրտի, այսինքն Արևմտյան Հայաստանի անջատումը աղետաբեր կլիներ բուն թուրքական պետության գոյության համար: Ֆուադ Հաֆիզը նշում է, որ օսմանյան կառավարողները գտնում էին, որ չի կարելի թույլ տալ հայերի անջատվելը, քանի որ ըստ նրանց «զրկվել օսմանյան պետության մի մասից հոգուտ հայերի, նշանակում էր նրա սրտի կորուստ և մայրամուտ»[18]: Եվ եթե հայերը վստահեցնում էին, որ նրանք անջատման նպատակներ չէին հետապնդում, այլ ցգտում էին բարեփոխումների և Լեռնալիբանանի նման մի համեստ վարչական ինքնավարության, որի մասին հատուկ շեշտում է Մուսա Պրենսը[19], սակայն ոչ սուլթանը և ոչ էլ երիտթուրքերը չէին հավատում դրան: Եվ դրանից հետո, ինչպես հաստատում են արաբ հեղինակները, երիտթուրքերի ղեկավարությունը կանգնում է կայսրության տարածքում ապրող հայերին ֆիզիկապես ոչնչացնելու քաղաքականության վրա, որպես թուրքական պետության փրկության և նրա ամբողջականության պահպանության միակ և հուսալի միջոց:

Հայոց ցեղասպանության երրորդ պատճառը արաբ հեղինակները համարում են հայերի, ինչպես նաև Օսմանյան կայսրության այլ ոչ թուրք ժողովուրդների բռնի թուրքացման և էթնիկական առումով մաքուր թուրքական պետություն ստեղծելու քաղաքականության չախողումը: Ինչպես

նշում է Նաիմ ալ-Յաֆին, 1908 թ. հեղաշրջումից և իշխանության գալուց հետո «երիտթուրքերը հակվեցին Օսմանյան կայսրության հպատակների՝ արաբների, հայերի, քրդերի և մյուս ազգությունների թրքացմանը»[20]: Եվ նա եզրակացնում է, որ «հայերի և արաբների թշնամին մեկն էր՝ երիտթուրքերի ղեկավարությունը»[21]:

Այս հարցը բավականին հանգամանորեն է լուսաբանվում Ջիհադ Սալեհի «Թուրքական թուրանիզմը ֆունդամենտալիզմի և ֆաշիզմի միջև» աշխատության մեջ, որի մի գլուխը վերնագրված է «Հայկական հարցը»: Նա նշում է, որ երիտթուրքերի ազգային քաղաքականության բնորոշ գիծը «մոլեռանդ նացիոնալիզմն էր, հիմնված ենթակայության և բռնի թուրքացման սկզբունքների վրա»[22]:

Հայերի և կայսրության մյուս ժողովուրդների բռնի թուրքացման հարցին ընդարձակ էջեր են հատկացրել իրենց աշխատություններում Ֆուադ Հասան Հաֆիզը, Սրվան ալ-Մուդավարը, Իլյաս Զանանիրին և այլ արաբ հեղինակներ: Արաբ ուսումնասիրողները, մասնավորապես Օսման աթ-Թուրքը, ուշադրություն են դարձրել այն հանգամանքի վրա, որ երիտթուրքերը ցգտում էին բռնի միջոցներով թուրքացնել ոչ միայն քրիստոնյաներին՝ հայերին, հույներին և այլն, այլև ոչ թուրք մուսուլման ժողովուրդներին՝ արաբներին, քրդերին, պարսիկներին, հնդիկներին, որոնք բնակվում էին Օսմանյան կայսրության տարածքում [23]: Հետևաբար, բռնի թուրքացման քաղաքականությունը համընդհանուր բնույթ էր կրում:

Արաբ հեղինակները բացահայտել են, որ բռնի թուրքացման և էթնիկական «մաքուր» թուրքական պետություն ստեղծելու ցգտումները խարսխված էին թուրք էթնոսի գերազանցության վրա: «Թուրքական ազգը,- գրում է Նաիմ ալ-Յաֆին, - համարվում էր բարձր մյուս ազգերից»[24]: Սակայն արաբ հետազոտողները վճռականորեն հերքում են այդ հակագիտական թեզը, ապավինելով հայերի, հույների, արաբների և կայսրության այլ ժողովուրդների ստեղծած մշակութային արժեքներին: Ֆուադ Հասան Հաֆիզը ընդգծում է, որ հայերը ստեղծել են իրենց ինքնատիպ քաղաքակրթությունը և վիթխարի ավանդ ներդրել համաշխարհային քաղաքակրթության մեջ[25]: Սամիր Արբաշի բնութագրմամբ «հայ ժողովուրդն այն ժողովուրդն է, որ հռչակվել է իր խելքով, հանճարով և խիզախությամբ»[26] իսկ լիբանանցի պատմաբան Սալեհ Զահր ադ-Դինն իր «Հայեր, ժողովուրդ և պրոբլեմ» աշխատության մեջ հատուկ գլուխ է նվիրել հայերի ստեղծած մշակույթին և քաղաքակրթությանը, շատ բարձր գնահատելով այն [27]:

Կայսրության ոչ թուրք ժողովուրդները հակադրվում էին բռնի թուրքացմանը և ինչպես նշում են Մրվան ալ-Մուդավարը, Էմիլ Թուման և մյուսները, կայսրության առանձին մասերում, մասնավորապես արաբական երկրներում, դժգոհությունները վերածվեցին զինված ապաստամբության[28]: Հայերը, բնականաբար, նույնպես դիմադրում էին թուրքացման քաղաքականությանը, որի մասի հիշատակում են արաբ պատմաբանները: Այսպես, օրինակ, Սալեհ Զահիր ադ-Դինը նշում է, որ «Հայերը, ինչպես նաև արաբները, վճռականորեն ընդդիմանում էին թուրքացմանը, որպեսզի պահպանեն իրենց լեզուն, մշակույթը, սովորությունները և ավանդույթները»[29]:

Սակայն հայերի ընդդիմությունը չվերածվեց զինված պայքարի: Սա որպես սկզբունքային և կարևոր հագամանք ընդգծում են բոլոր արաբ հետազոտողները: «Պայքարելով թուրքական իշխանությունների թուրքացման քաղաքականության դեմ հայերը պահանջում էին ինքնավարություն, ազատություն և առանց հալածանքների կյանք»[30], - շեշտում է Սալեհ Զահիր ադ-Դինը: Սա շատ կարևոր դիտողություն է, որից հետևում է, որ հայերը ոչ մի առիթ չեն տվել օսմանյան իշխանություններին իրենց ֆիզիկական ոչնչացման համար: Նրանք, ինչպես հաստատում են արաբ հեղինակները, բռնի թուրքացմանը ընդդիմանում էին հենվելով իրենց հոգևոր-մշակութային արժեքների, քաղաքակրթության վրա, որը երիտթուրքերը, դարչյալ արաբ հեղինակների հավաստմամբ, ի վիճակի չէին հաղթահարել և մարսել խաղաղ և քաղաքակիրթ մեթոդներով:

Զախողում կրելով բռնի թուրքացման քաղաքականության մեջ, երիտթուրքերը կանգնեցին հայերին ֆիզիկապես ոչնչացնելու քաղաքականության վրա: Այս տեսակետը շատ որոշակիորեն և հստակորեն է արտահայտել Սալեհ Զահիր ադ-Դինը, որը գրում է, որ իթթիհադականների մոտ ծագեց «հայերին իրենց հարազատ վայրերից հանելու և Օսմանյան կայսրության ամբողջ տարածքում ոչնչացնելու ծրագիրը»[31]: ՈՒշագրավ է նաև Իլյաս Զանանիրիի տեսակետը: Նա գտնում է, որ «Հայերի դեմ Բարչր Դռան քաղաքականությունը հենվում էր կրոնա-դավանական մոտիվի վրա և նրա նպատակն էր ոչնչացնել քրիստոնյաներին մուսուլման-թուրքերի չեռքով»[32]: Նույնանման տեսակետներ են արտահայտում նաև Ֆուադ Հաֆիզը, Ջիհադ Սալեհը, Մրվան ալ-Մուդավարը, Մասուդ Զահիրը և արաբ այլ հեղինակներ:

Հայկական ցեղասպանության չորրորդ պատճառը՝ պանթուրքիզմն էր: Այս հարցում արաբ հեղինակները միակարծիք են: Ջիհադ Սալեհը պանթուրքիզմը բնութագրում է որպես «ռասայական, շովինիստական, հեգեմոնիստական, ֆաշիստական շարժում»[33]: Երիտթուրքերը փայփայում էին թյուրքական բոլոր ժողովուրդներին իրենց իշխանության ներքո միավորելու ծրագրեր: Մրվան ալ-Մուդավարի կարծիքով նրանք ցգտում էին ստեղծել «նոր կայսրություն,բաղկացած թյուրք ժողովուրդներից, որոնք բնակվում են Կովկասյան լեռներից մինչև Թուրքեստանի սահմանները»[34]: Արաբ հեղինակները գտնում են, որ պանթուրքիզմի ծրագրերը մեծ վտանգ էին ներկայացնում կայսրության բոլոր ժողովուրդներին, սակայն, նրանք առանձնացնում են հայերին և արաբներին: Նույն Մրվան ալ-Մուդավարն ընդգծում է, որ թուրանական կայսրություն ստեղծելու դեպքում «նրանում տեղ չէր մնում մյուս ժողովուրդների համար, այնպիսի ժողովուրդների, ինչպես արաբները և հայերը»[35]: Այս երկու ժողովուրդները կանգնած էին պանթուրքիզմի ծրագրերի իրագործման ճանապարհին, այդ պատճառով էլ ենթակա էին վերացման: «Հայերը և արաբները, - գրում է Սալեհ Զահիր ադ-Դինը,- այն երկու ժողովուրդներն էին, որոնք ամենից շատ էին ենթակա ոչնչացման ռասիստական քաղաքականությանը»[36]: Արաբ հեղինակները վկայակոչում են երիտթուրքական ղեկավարներից Ալի Իհսան փաշայի հայտարարությանը, որ «եթե չլինեին հայերը, մենք վաղուց նվաճած կլինեինք Կովկասը»[37]:

Այսպիսով, թուրքացման և էթնիկական առումով «մաքուր» թուրքական պետություն ստեղծելու խնդիրը միաչուլվեց պանթուրքիզմի քաղաքականությանը: Այս տեսակետը շատ հստակ է արտահայտել Ֆուադ Հաֆիզը. «Այդ երկու խնդիրները պահանջում էին օսմանյան հայերի վերջնական վերացում» [38]:

Այսպիսով, ըստ արաբ ուսումնասիրողների, երիտթուրքերին անհրաժեշտ էր ոչնչացնել հայերին, որպեսզի պահպանեին թուրքական պետության ամբողջականությունը, վերածելով այն էթնիկական առումով միատարր թուրքական պետության, և իրագործեին իրենց պանթուրանական էքսպանսիոնիստական ծրագրերը:

Իսկ ինչպե՞ս են գնահատվում արաբական պատմագրության մեջ 1915 թ. իրադարձությունները: Արաբ հեղինակները գտնում են, որ այն, ինչ տեղի ունեցավ արևմտահայերի հետ 1915 թ., տեղական բախումներ կամ սովորական ջարդեր չէին, այլ ցեղասպանություն, որը իրագործվեց օսմանյան պետության կողմից նախօրոք կազմված ծրագրի համաչայն: «Հայե-

ի ցեղասպանությունը,- գրում է Նաիմ ալ-Յաֆին,- իրագործվեց կանխամտածված կերպով և հրահանգներով՝ համաշյայն ընդունված ծրագրի»[39]: Նման ծրագրի գոյության հանգամանքը ընդգծում է նաև Իլյաս Զանանիրին: «Երբ սկսվեց պատերազմը, - նշում է նա, - թուրքական կառավարությունը հրաժարվեց հայերի վիճակը բարելավելու ծրագրից և գտավ, որ պատերազմը հարմար առիթ է ընտրում իրագործելու հայ ժողովրդի ոչնչացման ծրագիրը»[40]: Արևմտահայերի հետ առաջին համաշխարհային պատերազմի տարիներին պատահածը ցեղասպանություն է գնահատում նաև Սալեհ Զահիր ադ-Դինը, նշելով, որ «այն ինչ տեղի ունեցավ հայերի հետ 1915 թ. և հետագա տարիներին, ոչ այլ ինչ էր, եթե ոչ ցեղասպանություն»[41]: Իսկ Մուսա Պրենսը գենոցիդի անալոգիայով գիտական շրջանառության մեջ դրեց «արմենոցիդ» տերմինը, ընդգծելով, որ «արմենոցիդը ամենագենոցիդային գենոցիդն է»[42]:

Ֆուադ Հաֆիզը, Սամիր Արբաշը և մյուսները հայկական ցեղասպանությունը որակում են որպես «20-րդ դարի սև էջ» և որպես հանցագործություն համայն մարդկության դեմ [43]:

Դրա հետ մեկտեղ արաբ հետազոտողները հայոց ցեղասպանությունը դիտարկում են հետագայում այլ ժողովուրդների նկատմամբ կիրառված ցեղասպանության տեսանկյունից, նրանց մեջ տեսնելով ինչ-որ գենետիկ կապ: Այդ մոտեցումը որոշակիորեն դրսևորվում է, երբ նրանք, հատկապես Մուսա Պրենսը և Ֆուադ Հաֆիզը, հաջորդայնություն են տեսնում երիտթուրքերի կողմից կիրառված հայոց ցեղասպանության և Երկրորդ Համաշխարհային պատերազմի տարիներին Եվրոպայի ժողովուրդների դեմ Հիտլերի իրագործած ցեղասպանության քաղաքականության միջև: Մուսա Պրենսը ընդգծում է, որ թուրքերի կատարածը քառորդ դար անց կրկնեց Հիտլերը[44]: Նա հիշեցնում է Հիտլերի 1939 թ. օգոստոսի 22-ի ելույթը գերմանական բանակի բարձր հրամանատարության առջև, Լեհաստանի վրա հարձակվելու նախօրեին, որի ժամանակ հրամայելով անխնա ոչնչացնել լեհ տղամարդկանց, կանանց և երեխաներին, Հիտլերը շեշտում է. «Ո՞վ է այսօր հիշում հայերի կոտորածը»[45]: Եւ չի կարելի չհամաձայնվել Մուսա Պրենսի եզրակացության հետ, որ «արմենոցիդը ելակետային փուլ էր նացիստների կողմից իրագործված ցեղասպանության ճանապարհին»[46]:

Համանման գնահատական է տալիս նաև Ֆուադ Հաֆիզը, երբ նա զուգահեռ է անցկացնում երիտթուրքերի կազմակերպած հայկական և

Հիտլերի իրագործած ցեղասպանությունների միջև: «Երբ Ադոլֆ Հիտլերը կատարեց իր ցեղասպանությունը (նկատի ունի հրեաների, լեհերի, սլավոնների և այլն - Ն.Հ.),- գրում է եգիպտացի պատմաբանը,- նա հիշեցրեց հայկական ցեղասպանության մասին որպես օրինակ և նմուշ»[47]: Սա շատ էական բնութագրություն է, որը խոսում է այն մասին, որ երիտթուրքերը տալով ցեղասպանության նմուշ, փաստորեն գերմանական ֆաշիստների համար եղել են ուսուցիչներ, որոնք որպես աշակերտներ միանգամայն արժանի են եղել իրենց ուսուցիչներին:

Միաժամանակ արաբ հեղինակները ուշադրություն են դարձնում այն իրողության վրա, որ նամաշխարհային հանրությունը դեռևս ամբողջապես չի դատապարտել այդ հանցագործությունը: Իլյաս Զանանիրին դա համարում է «խայտառակություն ազատ աշխարհի համար»[48]: Միանգամայն իրավացիորեն Մուսա Պրենսը ընդգծում է, որ «արմենոցիդը չունեցավ իր Նյուրենբերգը»[45]:

Բայց եթե միջազգային հանրությունը չի դատապարտել համայն մարդկության դեմ գործած այդ հանցանքը, ապա հայ վրիժառուները պատժեցին երիտթուրքական այն ղեկավարներին, որոնք մտահղացան և իրագործեցին այդ ոճրագործությունը: Հայ հայրենասերների գնդակից սպանվեցին Թալեաթը, Ջեմալը, Սաիդ Հալիմը, Շաքիր Բեհա էդ-Դինը, Ջավիդը և ուրիշներ: Այս հարցը բավականին լայնորեն է լուսաբանված հայոց ցեղասպանությանը նվիրված գրականության մեջ: Արաբ հեղինակների մոտեցումն այդ խնդրին միանգամայն դրական է: Լիբանանյան հանրագիտարանում նրանք որակվել են որպես սուրբ գործի համար նվիրված ֆիդայիներ[50]: Ամին Սաիդը իր արժեքավոր ուսումնասիրության մեջ նշելով, որ հայ երիտասարդները պատերազմից հետո սպանեցին նախկին պրեմիեր մինիստր էմիր Սաիդ Հալիմին, ներքին գործերի նախարար Թալեաթ-փաշային և ծովակալ Ահմեդ Ջեմալ-փաշային, դրանում ոչ մի արտառոց բան չի տեսնում[51]: Նա այդ հարցին մեծ կարևորություն է տվել և ցանկացել, որ արաբ ընթերցողներն իմանան թե երիտթուրքական ղեկավար ոճրագործներից որը ում ձեռքով, երբ և որտեղ է սպանվել: «Առաջինը, - նշում է նա,- սպանվեց Թալեաթ-փաշան Բեռլինում, 1921 թ. մարտի 15-ին, Սողոմոն Թեհլերյանի ձեռքով»[52]: Հետո, 1921 թ. դեկտեմբերի 6-ին Հռոմում Արշավիր Շիրակյանի գնդակից սպանվում է էմիր Մուհամմադ Սաիդ Հալիմը, 1922 թ. ապրիլի 7-ին Բեռլինում՝ Շաքիր Բեհա էդ-Դինը, իսկ 1922 թ. հուլիսի 21-ին Թիֆլիսում՝ Ջեմալ-փաշան[53]:

Սողոմոն Թեհլերյանին, Արշավիր Շիրակյանին, Պետրոս Տեր-Պողոսյանին և Ստեփան Ծաղիկյանին, որոնք պատժեցին երիտթուրքական ոճրագործներին, ազգային վրիժառուներ և հերոսներ են համարում նաև Սամիր Արբաշը, Ասադ Դաղիրը, Սալեհ Զահր ադ-Դինը և մյուս արաբ ուսումնասիրողները:

Երիտթուրքական հանցագործներին հայ վրիժառուների կողմից պատժելու հարցը քննարկելիս արաբ հեղինակները ցուցաբերում են ինքնատիպ մոտեցում: Նրանք այդ հարցի լուսաբանությանը և գնահատմանը մոտենում են նաև արաբների հետ առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ տեղի ունեցած ողբերգության տեսանկյունից: Այս հարցը պարզաբանման կարիք է զգում:

Արաբ հետազոտողները, մասնավորապես Ամին Սաիդը, Ֆուադ Հաֆիզը, Սալեհ Զահր ադ-Դինը և ուրիշներ, հենվելով փաստաթղթերի և այլ արժեքավոր աղբյուրների վրա, գտնում են, որ հայերը և արաբները այն երկու ժողովուրդներն էին, որոնք առաջին հերթին էին հերթակա ոչնչացման և որ երիտթուրքերը ծրագրել էին ոչ միայն հայերի, այլև արաբների ցեղասպանությունը: Երիտթուրքերին հաջողվեց լիովին իրագործել իրենց ծրագիրը հայերի նկատմամբ: Ինչ վերաբերվում է արաբներին, ապա երիտթուրքերին՝ դա հաջողվեց մասամբ: Նրանք գլխատեցին արաբների ազգային-ազատագրական շարժման ղեկավարներին և մտավորականության ծաղիկը: Երիտթուրքերի եռապետության (Էնվեր, Թալեաթ և Ջեմալ) անդամ, Սիրիայում տեղադրված Թուրքական Չորրորդ բանակի հրամանատար Ջեմալ-փաշայի հրամանով Դամասկոսում, Բեյրութում և Ալեյում 1915-1916 թթ. կախաղան բարձրացվեցին արաբների ազատագրական պայքարի առաջնորդները՝ Աբդել Համիդ Զահրավիի գլխավորությամբ: Հազարավոր արաբական ընտանիքներ բռնագաղթվեցին իրենց հարազատ բնակավայրերից Անատոլիայի խորքերը, որոնցից հազար-հազարավորները զոհ գնացին քաղցին և սովին, ինչպես հայ բռնագաղթվածները: Արաբները լավ են հիշում այս ամենը և դա համարում են իրենց մեծ համազգային ողբերգությունը: Այդ պատճառով էլ նրանց համար միանգամայն հասկանալի է հայ վրիժառուների սխրանքը: Եւ արաբական պատմագրական միտքը հանգել է հիմնավոր եզրակացության՝ հայ վրիժառուները ոչնչացնելով Թալեաթին, Ջեմալին և երիտթուրքերի այլ ղեկավար հանցագործներին, դրանով իսկ վրեժ են լուծել նաև արաբների փոխարեն: Ֆուադ Հաֆիզը շատ հստակ կերպով է ցնակերպում այդ տեսակետը: Նա գտնում

է, որ երիտթուրքական հանցագործներին սպանելը «արդարացի պատիժ էր ոչ միայն 1915 թ., առաջին համաշխարհային պատերազմի տարիներին կատարված հայերի ցեղասպանության համար, այլև արաբական ապստամբության ղեկավարների սպանության համար, որոնք մահապատժի ենթարկվեցին 1916 թ. Ծամում (Սիրիայում - Ն.Հ.) և հարևան վիլայեթներում տեղադրված Չորրորդ օսմանյան բանակի հրամանատար Ջեմալ-փաշայի կախաղանների վրա»[14]: Սամիր Արբաշը նույնպես հայերի արարքը համարում է «արդարացի ոչ միայն հայոց ցեղասպանության, այլև արաբական ապստամբության առաջնորդների սպանելու կապակցությամբ, իրագործված Ջեմալ-փաշայի և Սիրիայում գտնված Չորրորդ բանակի հրամանատարության կողմից»[15]: Արաբ պատմաբանները Սողոմոն Թեհլերյանին և նրա գործընկերներին ուղղակի համարում են հերոսներ: Այդ կարծիքին է Ասադ Դաղիրը, որն իր «Արաբների ապստամբությունը» գրքում, որի մի ենթաբաժինը վերնագրված է «Հայկական հարցը», զետեղել է Պետրոս Տեր-Պողոսյանի և Ստեփան Ծաղիկյանի համատեղ լուսանկարը, դրան կցելով հետևյալ տեքստը. «Հայ հերոսներ Պետրոս Տեր-Պողոսյան և Ստեփան Ծաղիկյան, որոնք սպանել են Ջեմալ-փաշային Թիֆլիսում 1922 թ., վրեժ լուծելով մեկուկես միլիոն հայկական զոհերի և արաբ զոհերի համար»[16]:

Արաբական պատմագրությունը, որը հենվում է պատմականության և գիտական օբյեկտիվության սկզբունքների վրա, ընդլայնում է հայոց ցեղասպանության հետ կապված խնդիրների ուսումնասիրության դաշտը: Արաբական աղբյուրների և տեսակետների ներհոսքը այդ բնագավառ նպաստում է հայոց ցեղասպանության առավել հիմնավոր հետազոտմանը:

1. Ֆայեզ ալ-Ղոսեյն, Ջարդերը Հայաստանի մեջ, Բեյրութ, 1988 թ. (արաբերեն):

2. Moussa Prince, Un Genocide Impuni. L'Armenocide. Introduction, Bayrouth, 1960.

3. Իլյաս Զանանիրի, Ժողովրդի ողբերգությունը, Երուսաղեմ, 1985 թ. (արաբերեն):

4. Նաիմ ալ-Յաֆի, Հայերի կոտորածները և արաբական հասարակական կարծիքի դիրքորոշումը: Ապրիլի 24, Լաթաքիյա, 1992 թ. (արաբերեն):

5. Սալեհ Զահր ադ-Դին, Օսմանյան կառավարության քաղաքականությունն Արևմտյան Հայաստանում և մեծ տերությունների դիրքորոշումը հայկական հարցում/ 19-րդ դ. վերջին քառորդ - 20-րդ դ. առաջին քառորդ/, Երևան, 1994 թ:

6. Ֆուադ Հասան Հաֆիզ, Հայ ժողովրդի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը, Կահիրե, 1986 թ. (արաբերեն):

7. Մրվան ալ-Մուդավար, Հայերը պատմություն ընթացքում, Բեյրութ, 1982 թ. (արաբերեն):

8. Օսման աթ-Թուրք, Էջեր հայ ազգի պատմությունից, Հալեբ, 1960 թ. (արաբերեն):

9. Սամիր Արբաշ. Հայաստան, երկիր և ժողովուրդ, Բեյրութ, 1991 թ. (արաբերեն):

10. Սալեհ Զահր ադ-Դին, Հայեր. ժողովուրդ և պրոբլեմ, Լիբանան, 1988 թ.:

11. Амин Саид, Восстания арабов в 20-ом в. Перевод с арабского, Москва, 1974.

12. Эмиль Тума, Национально-освободительное движение и проблемы арабского единства. Перевод с арабского, Москва,1977.

13. Zein N. Zein, Emergence of Arab Nationalism, N.Y.1973.

14. Ջիհադ Սալեհ, Թուրքական թուրանիզմը ֆունդամենտալիզմի և ֆաշիզմի միջև, Բեյրութ,1987թ. (արաբերեն):

15. Ասադ Դաղիր, Արաբների ապստամբությունը,Հալեբ, 1989 թ. (արաբերեն):

16. Մասուդ Զահիր, Լիբանանի սոցիալական պատմությունը, Բեյրութ, 1974թ. (արաբերեն)

17. Ֆուադ Հասան Հաֆիզ, նշվ. աշխ. էջ. 180:

18. Նույն տեղում, էջ. 207:

19. Moussa Prince, L'Armenocide, p.28.:

20. Նաիմ ալ-Յաֆի, նշվ. աշխ. էջ. 14:

21. Նույն տեղում, էջ. 17:

22. Ջիհադ Սալեհ, նշվ. աշխ. էջ. 5:

23. Օսման աթ-Թուրք, նշվ. աշխ. էջ. 236:

24. Նաիմ ալ-Յաֆի, նշվ. աշխ. էջ. 25:

25. Ֆուադ Հասան Հաֆիզ, նշվ. աշխ. էջ. 3:

26. Սամիր Արբաշ, նշվ. աշխ. էջ. 7:

27. Սալեհ Զահր ադ-Դին, Հայեր. ժողովուրդ և պրոբլեմ, էջ. 25-35:

28. Տես, Մրվան ալ-Մուդավար, նշվ. աշխ. էջ. 403; Էմիլ Թումա, նշվ. աշխ. էջ. 104-105 և այլն:

29. Սալեհ Զահր ադ-Դին, նշվ. աշխ. էջ. 95:

30. Նույն տեղում:

31. Նույն տեղում:

32. Իլյաս Զանանիրի, նշվ. աշխ. էջ. 3:

33. Ջիհադ Սալեհ, նշվ. աշխ. էջ. 5:

34. Մրվան ալ-Մուդավար, նշվ. աշխ. էջ. 403:

35. Նույն տեղում:

36. Սալեհ Զահր ադ-Դին, նշվ. աշխ. էջ. 67:

37. Նույն տեղում, էջ. 95:

296

38. Ֆուադ Հասան Հաֆիզ, նշվ. աշխ. էջ. 302:

39. Նաիֆ ալ-Յաֆի, նշվ. աշխ. էջ. 12:

40. Իլյաս Զանանիրի, նշվ. աշխ. էջ. 60:

41. Սալեհ Զահր ադ-Դին,Օսմանյան կառավարության քաղաքականությունը. էջ. 26:

42. Moussa Prince, L'Armenocide, pp 26-27.

43. Ֆուադ Հաֆիզ, նշվ. աշխ. էջ. 297; Սամիր Արբաշ, նշվ. աշխ. էջ. 165:

44. Mussa Prince, L'Armenocide, p. 38.

45. Նույն տեղում, էջ. 7:

46. Նույն տեղում, էջ. 60:

47. Ֆուադ Հաֆիզ, նշվ. աշխ. էջ. 297;

48. Իլյաս Զանանիրի, նշվ. աշխ. էջ. 60:

49. Moussa Prince, L'Armenocide, p.51.

50. Ֆուադ Իֆրահիմ ալ-Բուստանի, Հանրագիտարան, հ.10, Բեյրութ, 1973 թ., էջ 310: (արաբերեն)

51. Амин Саид, указ. раб. с. 80.

52. Նույն տեղում:

53. Նույն տեղում:

54. Ֆուադ Հասան Հաֆիզ, նշվ. աշխ. էջ. 316:

55.Սամիր Արբաշ, նշվ. աշխ. էջ. 182:

56. Ասադ Դաղիր, Արաբների ապստամբությունը, Հալեբ, 1989 թ. (արաբերեն):